ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

հուլիսի 2021 թվականի № Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի №406Ա ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի №202Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 10-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, №ՎԴ/9715/05/20 գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2021 թվականի ապրիլի 27-ի «Հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության 2021 թվականի ապրիլի 28-ի «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 25-ի №ԳԲ/34.1-Մ2-1/2168-2021 գրության առնչությամբ հարկադիր կատարումն ապահովող ծառայության 2021 թվականի հուլիսի 13-ի №01/38/6061-2021 գրությամբ ներկայացված պարզաբանումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 18-ի «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վայոց Արև-1» արևային

էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանելու մասին» №406Ա որոշման 1-ին կետում «21.891» և «26.269» թվերը փոխարինել համապատասխանաբար «24.323» և «29.188» թվերով,

2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 26-ի «Արևային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու մասին» №202Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերությունում «23.584» և «28.301» թվերը փոխարինել համապատասխանաբար «26.204» և «31.445» թվերով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն իրազեկելու օրվան հաջորդ օրվանից, ընդ որում, 1-ին կետի գործողությունը տարածվում է 2021 թվականի ապրիլի 27-ից մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը ծագած հարաբերությունների վրա, իսկ 2-րդ կետի գործողությունը՝ 2021 թվականի հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հուլիսի 2021թ.